ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յուլիսի 13-ին Վեհափառ Կաթուղիկոսի օծման տարեդարձը կատարուեց մեծ հանդիսով։ Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութիւնը շուրջառ առած մեծ շքով ուղեկցեց Վեհափառին վեհարանից Մայր Տաճար։ Վեհափառի օծման տարեդարձի առթիւ Մայր Տաճարում հանդիսաւոր ս. պատարագ մատուցեց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսն։ Ս. Պատարագից յետոյ կատարուեց Իշման ս. Սեղանի առաջ գոհաբանական հայրապետական մաղթանք, որից յետոյ միաբանութիւնը և ներկայ ժողովրդականք համբուրեցին Հոգևոր Տիրոջ ս. աջը։ Երեկոյեան վանքի բակում ոտնի առթիւ հրաւառութիւն կար։

Վեհափառը զանազան տեղերից բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ստացաւ։

Չնայած որ շոգերը էջմիածնում սկսում են յունիսի սկզբներին, բայց կարևոր գործերի պատճառով Վեհափառն այս տարի չկարողացաւ աւելի շուտ մեկնել Հայրապետական Բիւրական ամարանոցը։ Հազիւ կարողացաւ յուլիսի 15-ին ուղեկցութեամբ դիւանապետ Տ. Բաղրատ եպիսկոպոսի և Սմբատի անդամ Տ. Բարգէն վարդապետի մեկնել Բիւրական։ Այդ նոյն առաւօտեան վաղ ամբողջ միաբանութիւնը Հոգևոր Տիրոջ ուղեկցեց վեհարանից Մայր Տաճար և այնտեղից էլ Տրդատի դռնով մինչև դրսի դուռը։

Անակրնկալ կերպով սկսուեց Եւրոպական պատերազմը և Վեհափառն ստիպուած եղաւ կարևոր գործերի պատճառով սովորականից աւելի շուտ իջնել Բիւրականից։

Օգոստոսի 5-ին երեկոյեան 6 ժամին զանգերն ազդարարեցին Վեհափառի գալուստը և միաբանութիւնը

շտապեց ընդառաջ ելնել և սպասել Վեհափառի գալստեան։ Ժամը 7-ի մօտերը Վեհափառը ուղեկցութեամբ դիւանապետ Տ. Բագրատ եպիսկոպոսի և Վանական Կառավարութեան անդամ Տ. Արիստակէս վարդապետի ժամանեց Մայր Աթոռ։ Միաբանութեան ուղեկցութեամբ Վեհափառը բարեհաճեց մտնել Մ. Տաճար և Իջման ս. Սեղանի առաջ երկրպագելուց յետոյ բարձրացաւ վեհարան։

Երբ յայտարարուեց պատերազմը, Վեհափառն բարեհաճեց Ռուսահայոց բոլոր թեմական առաջնորդներին հրամայել իրենց թեմերի եկեղեցիներում մաղթանք կատարել՝ բարեմաղթելու Մեր ընդհանուր հայրենիքի քաջամարտիկ զինուորներին յաղթութիւն ընդդէմ Մեծն Ռուսաստանի յանդուգն թշնամիների։

Վեհափառ Հայրապետի հրամանով յուլիսի 27-ին Մայր Տաճարում ամբողջ միաբանութեան և ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ ս. Պատարագ մատուցուեց։ Պատարագիչն էր Տ. Յուսիկ արքեպիսկոպոսն։ Հանդիսաւոր պատարագից յետոյ Կայսերական մաղթանք կատարուեց։ Թէ միաբանութիւնը և թէ ժողովուրդը զգացուած աղօթում էր, որ Տէրը պարգևէ Ռուսաստանին յաղթութիւն, որ գալիք մեծ փորձութիւնից անվտանգ ելնի և ամօթահար մնան Նորա արտաքին թշնամիները։

Պատարագից յետոյ ժողովրդի խուռն բազմութիւնը «կեցցէ Ռուսաստանը և նորա քաջամարտիկ զօրքը» կոչելով՝ Վեհափառ Հայրապետի բացակայութեան պատճառով դիմեց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին և խնդրեց նորան Նորին Վեհափառութեան միջոցով արկանել իրենց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսեր։